ԺԶՀ գործունեությունը ՀՀ ներքին գործերի նախարարության և ոստիկանության բարեփոխումների ոլորտում

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ ԺԶՀ), չնայած պաշտոնապես գործում է 2022թ.-ի դեկտեմբեր ամսից, սակայն ստեղծվել է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան (ԲՀՀՀ) կազմակերպության հենքի վրա, շարունակում է ԲՀՀՀ գործունեությունը արդարադատության, մարդու իրավունքների պաշտպանության, իրավապահ համակարգի զարգացման ոլորտում ծրագրային աջակցության, ինչպես նաև քաղաքականության փաստաթղթերի մշակման, օրենսդրության զարգացման և այլ հարցերով։ ԲՀՀՀ-ն Ժողովրդավարության զարգացման հիմնադրամին է փոխանցել բոլոր ակտիվները, պարտավորությունները, մասնագիտական կարողությունները՝ ներառյալ ծրագրային անձնակազմը, ինչպես նաև ԲՀՀՀ անդամակցությունը բոլոր միջգերատեսչական աշխատանքային խմբերում, տարբեր նախարարություններին կից հասարակական խորհուրդներում, մասնագիտական ցանցերում և այլն (տե՛ս ակտիվների, պարտավորությունների փոխանցման մասին փաստաթուղթը՝ կից)։

Ոստիկանության բարեփոխումների ոլորտում Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը ոչ միայն իրականացնում է խոշոր դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրեր, այլ նաև ինքն է հանդիսանում դոնոր քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մի շարք ծրագրերի իրականացման համար։

Հիմնադրամի Արդարադատություն և մարդու իրավունքներ ծրագրերի ղեկավար Արփի Հարությունյանը 2023թ.-ից ընդգրկված է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճար հաշվարկելու նպատակով ոստիկանության ծառայողների ատեստավորման հանձնաժողովում։ Արփի Հարությունյանը նաև ներգրավված է Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի կազմում, պարեկային ծառայության ընդունելության հարցազրույցների հանձնաժողովների կազմում, համայնքային ոստիկանության և քրեական ոստիկանության դիմորդների ընդունելու

թյան հարցազրույցների հանձնաժողովների կազմում, խոշտանգումների դեմ պայքարի աշխատանքային խմբում, և այլն:

Չորս տարի շարունակ, մինչև 2025թ. հոկտեմբեր ամիսը, Հիմնադրամն իրականացնրել է «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագիրը, որի հիմնական բաղադրիչներից մեկը ոստիկանության բարեփոխումների մշտադիտարկումն ու բարեփոխումներին աջակցությունն էր: Այս ծրագրի շրջանակներում Ժողովրդավարության և գործընկեր կազմակերպությունների ջանքերով ստեղծվել են մշտադիտարկման համատեղ զեկույցներ, այդ թվում ԺԶՀ աջակցությամբ ՀՀ ոստիկանության բարեփոխումների 2020-2022թթ. ռազմավարության գնահատման հետազոտությունը, ՀՀ ոստիկանության զնումների գործընթացի հետազոտությունը, ինչպես նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող օրենսդրության բացերը եվ առաջարկներ լավարկման ուղղությամբ» քաղաքականության հետազոտությունը:

Ծրագրի շրջանակներում Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպվել ուսումնական այցեր ՀՀ ներքին գործերի նախարարության և ոստիկանության աշխատակիցների համար Լեհաստանի Հանրապետություն, Գերմանիա և Ֆրանսիա՝ տեղական ոստիկանական բարեփոխումների, այդ թվում՝ համայնքային ոստիկանության, ոստիկանության գվարդիայի ներդրման փորձը, ինչպես նաև այդ երկրներում ոստիկանության աշխատանքի լավագույն փորձն ուսումնասիրելու նպատակով: Ուսումնական այցը ներառել է աշխատանքային հանդիպումներ պետությունների ոստիկանության ստորաբաժանումների, այլ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Այցին մասնակցել են ՀՀ ներքին գործերի նախարարության, ոստիկանության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

ԺԶՀ-ն իր գործունեության շրջանակներում սերտորեն համագործակցում է ՀՀ ներքին գործերի նախարարության և քաղաքացիական հասարակության կառույցների

հետ՝ Ոստիկանության բարեփոխումների նոր ռազմավարության մշակման, ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության, ինչպես նաև հնարավոր բռնությունների բացառման և այլ հարցերում: Այս շրջանակներում կազմակերպվել են աշխատաժողովներ, քննարկումներ՝ ՀՀ ոստիկանության բարեփոխումների ոլորտում առկա խնդիրները և մարտահրավերները վերհանելու, ձևակերպելու, դրանց լուծման հնարավոր ուղիները մշակելու նպատակով: Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը նաև էական դերակատարում և ներգրավվածություն է ունեցել ոստիկանության բարեփոխումներին առնչվող տարբեր փաստաթղթերի («ՀՀ ոստիկանության բարեփոխումների նոր ռազմավարության և 2024-2026 թթ. գործողությունների ծրագիր, ԶՊՎ-ներում հասարակական դիտորդական խմբի ձևավորման կարգ և այլն) վերաբերյալ քաղաքացիական հասարակության միասնական դիրքորոշման մշակման և կոնսոլիդացման հարցում:

Ս.թ. սեպտեմբերի 8-ին Ներքին գործերի նախարարությունը և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը համատեղ կազմակերպել էին ՆԳ նախարարության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավման վերաբերյալ հանրային քննարկում:

Ներքին գործերի նախարարությունը և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը համատեղ ս.թ. սեպտեմբերի 10-ին նախաձեռնել են ՆԳՆ ներքին վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզների հետազոտության շուրջ հանրային քննարկումը, որին ներկա էին ՆԳՆ ենթակա ստորաբաժանումների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և փորձագետներ:

**Հաշվի առնելով ԺԶՀ ներգրավվածությունը ՀՀ ՆԳՆ և ոստիկանության բարեփոխումների աջակցման, հանրային վերահսկողության ընթացիկ գործընթացների մշտադիտարկման ոլորտներում, խնդրում ենք դիտարկել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի Արդարադատություն և մարդու**

իրավունքներ ծրագրերի ղեկավար Արփի Սամվելի Հարությունյանի թեկնածությունը

ՆԳ նախարարին կից Հասարակական խորհրդի կազմում ներգրավման համար։